ԿԱՐԳ
«ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԼՐԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության համար լրավճարի տրամադրման սույն կարգով (այսուհետ՝ Կարգ) սահմանվում են Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացվող գիտահետազոտական գործունեության խթանման համար Համալսարանի միջոցներից լրավճարի (այսուհետ՝ Լրավճար) տրամադրման ընթացակարգը:

1.2 Լրավճարը յուրաքանչյուր տարվա համար տրվում է հաջորդող տարվա ընթացքում:

2. ԼՐԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1 Յուրաքանչյուր տարվա հունվար ամսին Գիտական քաղաքականության և նորարարության կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) կողմից Համալսարանի ստորաբաժանումներին հասցեագրված գրությամբ սահմանված ժամկետներում գիտահետազոտական գործունեություն իրականացրած Համալսարանի յուրաքանչյուր աշխատակցի, ուսանողի կողմից լրացվում է Հավելված 1-ում ներկայացված ձևաչափը և պատրաստվում են համապատասխան հիմքերը, որոնց էլեկտրոնային տարբերակները՝ յուրաքանչյուր աշխատակցի և ուսանողի համար առանձին փաթեթով, Համալսարանի ստորաբաժանման կամ ստորաբաժանման ղեկավարի էլեկտրոնային փոստից ուղարկվում են Կենտրոնի էլեկտրոնային փոստի հասցեին:

2.2 Համալսարանի ստորաբաժանումներից ստացված փաթեթների ստուգումից, նախորդ տարիների հետ համեմատական վերլուծությունից հետո Կենտրոնում 15 աշխատանքային օրվա ընթացքում կազմվում է Համալսարանի աշխատակիցների և ուսանողների կողմից իրականացված գիտահետազոտական գործունեության տվյալների տարեկան բազան:

2.3 Գիտահետազոտական գործունեության տվյալների տարեկան բազայի կազմումից հետո Կենտրոնում 5 աշխատանքային օրվա ընթացքում իրականացվում է Լրավճարի հաշվարկման գործընթացը՝ ըստ Հավելված 2-ի:

2.4 Լրավճար տրամադրվում է.

- ներկայացված այն աշխատանքների և գրախոսումների համար, որոնցում առկա է նշում հեղինակի՝ Համալսարանի աշխատակից կամ ուսանող լինելու վերաբերյալ,
- այդ պահին Համալսարանի աշխատակից կամ ուսանող հանդիսացող անձանց:

2.5 Համահեղինակների առկայության պարագայում Հավելված 2-ի սանդղակի յուրաքանչյուր կետին համապատասխան գումարը բաժանվում է համահեղինակների թվի վրա և Համալսարանի աշխատակից կամ ուսանող հանդիսացող անձին տրամադրվում է միայն իրեն հասանելիք գումարը:

2.6 Տվյալ տարվա այն գիտական աշխատությունները, որոնց համար Լրավճար չի տրամադրվել համապատասխան հիմքերի բացակայության կամ այլ պատճառով, կարող են ընդգրկվել առավելագույնը հաջորդ տարվա գործընթացում՝ բացակայող հիմքերը ներկայացնելու դեպքում:

2.7 Այն գիտական աշխատությունները, որոնք բավարարում են Հավելված 2-ում ներկայացված սանդղակով մի քանի կետերի, հաշվարկը կիրականացվի ըստ առավել բարձր գումար նախատեսող կետի:

2.8 Լրավճարի հաշվարկման գործընթացի ավարտից հետո կազմվում է վերջնական ցուցակ՝ ըստ Համալսարանի յուրաքանչյուր ստորաբաժանման յուրաքանչյուր աշխատակցի կամ ուսանողի:

2.9 Լրավճարի հաշվարկման գործընթացի և ցուցակի կազմումից հետո արդյունքները Կենտրոնի կողմից ուղարկվում են Համալսարանի ստորաբաժանումների կամ ստորաբաժանումների ղեկավարների էլեկտրոնային հասցեներին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնել հնարավոր անճշտությունների մասին:

2.10 Կենտրոնի կողմից պատրաստած Լրավճարի տրամադրման վերջնական ցուցակն ուսումնասիրելու, վիճարկելի հարցերը քննարկելու նպատակով Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում է մինչև 10 անձից կազմված խորհուրդ:

2.11 Խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Համալսարանի ռեկտորը՝ որպես խորհրդի նախագահ, Կենտրոնի տնօրենը՝ որպես խորհրդի նախագահի տեղակալ, Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի տնօրեն-պրոռեկտորը, Արտաքին համագործակցության կենտրոնի տնօրենը, Մարդկային ռեսուրսների կառավարման, փաստաթղթաշրջանառության և իրավական ապահովման բաժնի պետը, Ֆինանսական ռեսուրսների կառավարման և հաշվառման բաժնի պետը, Գիտական քաղաքականության և նորարարության պատասխանատուն՝ որպես անդամներ:

2.12 Խորհրդի նիստը իրավազոր է, եթե մասնակցում է խորհրդի կազմի առնվազն 2/3-ը: Նիստի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահն ունի վճռորոշ ձայնի իրավունք: Նիստն արձանագրվում է:

2.13 Գրագողության բացահայտված առանձնահատուկ դեպքերը քննարկվում են խորհրդի նիստի ընթացքում, որոնցից յուրաքանչյուրի համար կայացվում է առանձին որոշում՝ տվյալ ամսագրի խմբագրական խորհրդի կողմից առկա եզրակացության հիման վրա:

2.14 Խորհրդի նախագահի կողմից հրավիրված նիստի ընթացքում վիճարկելի հարցերի քննարկումից և համապատասխան որոշումներ կայացնելուց հետո վերջնական հաստատվում է Լրավճարի տրամադրման ցուցակը:

2.15 Նիստի արդյունքների հիման վրա Համալսարանի ռեկտորը տալիս է Լրավճարի վճարման վերաբերյալ հրաման:

2.16 Կատարված հաշվարկների արդյունքում ստացված գումարը չի ներառում եկամտային հարկը և սոցիալական վճարի հետպահումները:

2.17 Լրավճարի տրամադրումից հետո հաջորդ ուսումնական տարվա 1-ին կիսամյակում պարտադիր է Համալսարանի աշխատակից հանդիսացող հեղինակ(ներ)ի կողմից տպագրված աշխատանքների ներկայացումը ամբիոնների կողմից կազմակերպվող գիտական սեմինարների ընթացքում: Հակառակ դեպքում տվյալ աշխատակիցների կողմից ծավալած գիտահետազոտական գործունեության համար տրամադրվող առաջիկա լրավճարից հետ է պահվում տրամադրվող գումարի 10 %-ը:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1 Սույն Կարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի Գիտական խորհրդի կողմից հաստատման պահից:

3.2 Սույն Կարգում փոփոխություններն ու լրացումները կատարվում են Գիտական խորհրդի հաստատմամբ:

Հավելված 1

_____

Անուն, ազգանուն

_____

Գիտ.աստիճան, կոչում

_____

Ստորաբաժանում

N	Աշխատանքի վերնագիր (առկայության դեպքում՝ ներկայացնել նաև հղումը)	Պարբերական/ Գիտաժողովի նյութերի ժողովածու (գիտաժողովի դեպքում անհրաժեշտ է նշել նաև անցկացման վայրը, օրերը)/ ուսումնամեթոդական/ուսումնագիտական/գիտամեթոդական աշխատանք, մենագրություն	Երկիր, հրատարակչություն	Տարի	Հատոր համար	Էջեր	Համահեղինակ	Գործունեության տեսակը															
								SJR –ի Q1, Q2 քառորդներում ընդգրկված ամսագրում հոդված	SJR –ի Q3, Q4 քառորդներում ընդգրկված ամսագրում հոդված	Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրում հոդված	Cite Score, Index Copernicus գրծակից ունեցող ամսագրերում հոդված	ՌԴ ԲՈՀԿ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրում և ժողովածուում հոդված	ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում հոդված	ՀՀ ԲՈԿ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրում և ժողովածուում հոդված	ՌԻՀՍ համակարգում ընդգրկված գիտական ամսագրում և ժողովածուում հոդված	Միջազգային գիտաժողովի ժողովածուում հոդված	Միջազգային գրախոսվող ամսագրում հեղված	Գրախոսվող ներ մասնագիտական ամսագրում հոդված	Հանրապետական գաղաժողովի ժողովածուում հոդված	Գիտամեթոդական/ուսումնամեթոդական/ ուսումնագիտական աշխատանք	Մենագրություն	Այլ
1.																							
2.																							
3.																							
4.																							

Հավելված 2

	Գործունեության տեսակը	Լրավճարի չափը (ՀՀ դրամ)[1]
1	SJR-ի Q1, Q2 քառորդներում ընդգրկված ամսագրում հոդված	150.000
2	SJR-ի Q3, Q4 քառորդներում ընդգրկված ամսագրում հոդված	125.000
3	Scopus շտեմարանում կամ Web of Science հարթակում ընդգրկված ամսագրում հոդված	100.000
4	Cite Score, Index Copernicus գործակից ունեցող ամսագրերում հոդված	50.000
5	ՌԴ ԲՈՀ-ի ցուցակում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված	35.000
6	ՇՊՀ-ի Գիտական տեղեկագրում հոդված	25.000
7	ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ-ի կողմից ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակ ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված	20.000
8	РИНЦ համակարգում ընդգրկված գիտական ամսագրերում և ժողովածուներում հոդված	20.000
9	Միջազգային գիտաժողովի ժողովածուում հոդված	20.000
10	Միջազգային գրախոսվող ամսագրում հոդված	15.000
11	Գրախոսվող նեղ մասնագիտական ամսագրում հոդված	15.000
12	Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական խորհուրդների կամ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խորհուրդների կողմից հաստատված հանրապետական գիտաժողովի ժողովածուում հոդված	10.000
13	Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական/ֆակուլտետային խորհուրդների կամ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խորհուրդների կողմից երաշխավորված մենագրություն	1 տպ. մամուլ- 3.000
14	Պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների գիտական/ֆակուլտետային խորհուրդների կամ ՀՀ ԳԱԱ ինստիտուտների խորհուրդների կողմից երաշխավորված գիտամեթոդական/ուսումնամեթոդական/ուսումնագիտական աշխատանք	1 տպ. մամուլ- 2.000
15	Գիտական գյուտի պետական հեղինակային վկայագիր	30.000
16	Միջազգային պաշտոնական կառույցների կողմից կազմակերպված ցուցահանդեսի ծրագրում ընդգրկվածություն և մասնակցություն (կերպարվեստ, քանդակագործություն, երաժշտական գործ)	20.000
17	Մենագրությունների, գիտամեթոդական/ուսումնամեթոդական/ուսումնագիտական աշխատանքների, դասագրքերի, թեկնածուական և դոկտորական աշխատանքների գրախոսում	1 գրախոսումը – 5.000
18	Մագիստրոսական թեզերի գրախոսում (ՀՀ այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակում)	1 գրախոսումը – 3.000
19	Հոդվածների գրախոսում	1 գրախոսումը – 2.000

[1] Համալսարանում ամրագրված գիտահետազոտական գործունեության զարգացման առաջնահերթությունների ուղղությամբ տպագրված աշխատանքների պարագայում տրամադրվող լրավճարի համար կիրառվում է 1,1 գործակից: